ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲԱՂԱԴՐԻՉ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

ԿՐՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ
(Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան) գ.գ.թ., դոցենտ
DOI: 10.61746/18292984-2026.1.28cmt-09

Ամփոփագիր. Պատերազմը բացառապես զինված բախման գործընթաց չէ. այն ժամանակակից ռազմավարական հարթակում ընթացող բարդ, բազմաշերտ դիմակայություն է, որտեղ ֆիզիկական ուժի կիրառումն է միայն տեսանելի մասնիկը ավելի խոր և համակարգված հակամարտության: Առաջին հերթին, դա կոգնիտիվ դիմակայություն է, որի մարտադաշտը մարդկային միտքն է: Դրա նպատակն անձի կոտրումն է՝ հետագա վերափոխման, նորի ստեղծման և օգտագործման համար՝ հակառակորդի նպատակներով: Հակառակորդն ազդում է մեր հոգեկանի վրա՝ հիմնվելով մեր աշխարհայացքի, մտածելակերպի, ավանդույթների, համոզմունքների և սովորությունների վրա, «բանալի» գտնելով մեր կոգնիտիվ համակարգին, որպեսզի կառավարի մեր վարքը և ազդի մեր որոշումների և գործողությունների վրա [8];

Ոչ մի պատերազմ երբեք չի սկսվել և չի ընթացել առանց հասարակության վրա տեղեկատվական ազդեցության: Փոխվել են միայն տեղեկատվության փոխանցման եղանակներն ու տեխնոլոգիաները, իսկ նպատակները միշտ նույնն են եղել՝ սեփական ուժերին մոտիվացնել և ոգեշնչել, հակառակորդին ՝ դեմորալիզացնել և վարկաբեկել:

Պատերազմի կոգնիտիվ և տեղեկատվական բաղադրիչներն այսօր ձեռք են բերել առավել մեծ նշանակություն, քան երբևէ: Սոցիալական մեդիայի, թվային հարթակների և գլոբալացված տեղեկատվական դաշտի պայմաններում հակառակորդը կարող է ազդել ոչ միայն առանձին անձանց, այլև հասարակության լայն շերտերի գիտակցության վրա: Սա

ստեղծում է նոր մարտահրավերներ ազգային անվտանգության և իտենտիկության պահպանման համար:

Բանալի բառեր՝ տեղեկատվական-հոգեբանական ազդեցություն, կոգնիտիվ դիմակայություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, համակարգերի քայքայում:

Ներածություն: Ռազմագիտության ժամանակակից դոկտրինաներում տեղեկատվական պատերազմը դիտարկվում է որպես կոգնիտիվ տիրույթում ընթացող գաղափարական պայքար՝ տեղեկատվական հարթակում իրականացվող համակարգային ազդեցության, տնտեսական և տեխնոլոգիական գերակայության համար մղվող անտեսանելի պայքարում:

Դեռևս տեխնոլոգիական դարաշրջանից շուրջ երկուհազարամյակ առաջ՝ մ.թ.ա. 5-րդ դարում, չինացի զորահրամանատար և փիլիսոփա Սուն Ցզին, խոսելով հակառակորդի վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցության մասին, իր «Պատերազմի արվեստը» տրակտատում հատուկ ուշադրություն է հատկացրել թշնամու վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցության ռազմավարության կիրառմանը, մանրամասն անդրադարձ է կատարվել տեղեկատվական-հոգեբանական ազդեցության գործողություններին: Տրակտատում առանձնացվում են տեղեկատվական-հոգեբանական ազդեցության մի շարք մեթոդներ, որոնք արդիական են և կիրառվում են նաև ժամանակակից տեղեկատվական պատերազմների համատեքստում, մասնավորապես՝

- Թիրախավորել և խաթարել հակառակորդ պետությունում առկա արժեքային համակարգը՝ վնասելով նրա բարոյական ու մշակութային հիմքերը [9]:

- Քայքայել էլիտաների հեղինակությունն ու լեգիտիմությունը՝ բարոյազրկելով նրանց հանրային ընկալման մակարդակում:

- Խրախուսել ներքին բևեռացում, հասարակական պառակտում և բախումներ՝ թուլացնելով ազգային միասնականությունը:

- Արժեզրկել ազգային ավանդույթներն ու խաթարել հասարակության հավատը սեփական պատմական, մշակութային և հոգևոր ինքնության հանդեպ [9]:

Կարևոր է գիտակցել, որ տեղեկատվական պատերազմի հիմնական նպատակը համակարգերի քայքայումն է՝քաղաքական համակարգի, հասարակության, բանակի, այլ

կերպ ասած՝ ցանկացած սոցիալական խմբի՝ անկախ դրանց մասշտաբից կամ կարգավիճակից: Համակարգի մեծ մասշտաբն ու բարդության աստիճանն այն չեն դարձնում ավելի պաշտպանված: Բարդ համակարգ ներթափանցելն ավելի հեշտ է, կարելի է խափանել բազմաթիվ կապեր, կանոններ, օրենքներ, անկայունացնել այն, ստիպել աշխատել ինքն իր դեմ և, վերջապես, ոչնչացնել: Դրա արդյունավետությունը նաև նրանում է, որ հնարավոր է ոչ ուղղակի (ֆիզիկական) ազդեցությամբ, այլ՝ դանդաղ ու աննկատ, ուղղորդելով և շահարկելով համակարգի առանձին տարրերը: Այս ազդեցությունը գրեթե աննկատելի է, համեմատաբար ցածր ծախսեր պահանջող (համեմատած դասական ռազմական գործողությունների հետ) և չափազանց արդյունավետ:

Մենք ապրում ենք տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի լիակատար ինֆորմացման ժամանակաշրջանում: Մեր առօրյա կյանքն ամբողջությամբ կապված է տեղեկատվության հետ, ամեն անգամ, երբ առցանց ապրանք ենք պատվիրում, բջջային հեռախոս կամ ճանապարհային ուղեցույց ենք միացնում, մենք թողնում ենք մեր հետքը՝ համալրելով տարբեր կազմակերպությունների և պետական կառույցների արդեն ահռելի տվյալների բազաները: Այս հարմարավետության համար մենք ստիպված ենք վճարել խոցելիությամբ՝ թե՛ անձնական, թե՛ պետական: Մենք բոլորս ինֆորմացիոն համակարգի մի մասն ենք, որը վատ ենք ճանաչում, ավելի վատ ենք կառավարում և վերահսկում:

Նյութը և մեթոդը: Հոգեբանական ներգործության ժամանակակից տեխնոլոգիաները: **Օվերթոնի պատուհանը որպես տեղեկատվա-հոգեբանական ազդեցության մոդել:**

Օվերթոնի պատուհանը հասարակության վրա հոգեբանական ազդեցության տեղեկատվա-հոգեբանական ազդեցության այն մոդելներից է, որի օրինակով բավական ակնհայտ հնարավոր է ներկայացնել տեղեկատվա-հոգեբանական ազդեցության մեխանիզմը: Այն կիրառելի է ինչպես լոկալ՝ առանձին երկրի շրջանակում, այնպես էլ գլոբալ՝ աշխարհի մակարդակում: Այն մշակվել է 1990-ականներին ամերիկացի գիտնական, հոգեբան Ջոզեֆ Օվերթոնի կողմից, որն զբաղվում էր մարդու գիտակցության վրա ազդելու տեխնոլոգիաների ուսումնասիրությամբ [7]:

Այս մոդելը լայնորեն օգտագործվում է տեղեկատվական և հոգեբանական ռազմավարությունների մշակման մեջ՝ ուղղված հասարակական կարծիքի ձևավորմանը, արժեքային համակարգերի վերակառուցմանը և ցանկալի սոցիալ-քաղաքական վարքագծի խթանմանը:

Մոդելը վերլուծում է, թե ինչպես կարելի է նախկինում անհնարին կամ անընդունելի համարվող գաղափարներն աստիճանաբար դարձնել քննարկելի, այնուհետև ընդունելի և, ի վերջո, նորմա՝ լայն հանրային գիտակցության մեջ:

Ըստ «Օվերթոնի պատուհանի»՝ ցանկացած հասարակության մշակույթն ու իդեալները կարելի է ամբողջությամբ փոխել, խեղաթյուրել հակադրության՝ որոշակի ժամանակահատվածում անցնելով 6 փուլով՝

1. Աներևակայելի և անընդունելի երևույթ:
2. Աննորմալ, արմատական, ծայրահեղ հազվադեպ քննարկվող երևույթ:
3. Ընդունելի, թույլատրելի, երբեմն քննարկվող երևույթ:
4. Նորմալ, սովորական, քննարկվող երևույթ:
5. Հանրաճանաչ, նորաձև, մշտապես քննարկվող երևույթ:
6. Օրինական, ամենաճիշտ, երբեմն՝ միակ ճիշտ երևույթ:



Նկար 1. «Օվերթոնի պատուհանի» սխեմատիկ պատկերը

Նկար 1-ում ներկայացված է «Օվերթոնի պատուհանի» սխեմատիկ պատկերը:

«Օվերթոնի պատուհանի» բանաձևումը կունենա հետևյալ տեսքը՝

Հասարակության ընկալում = (Ժամանակ × Քննարկումների ինտենսիվություն) + (Մեդիայի ներգործություն + Ինստիտուցիոնալ աջակցություն)

Այլ կերպ ասած՝ անկախ նրանից, թե որքան ահավոր է որևէ երևույթ, համապատասխան միջոցառումների և այլ միջոցների կիրառմամբ այն կարելի է ընկալման համար դարձնել նորմալ, օրինական և նույնիսկ հանրահայտ: Հիմնական խնդիրը հասարակության մեջ քննարկելի թեմա դարձնելն է:

Հոգեբանական ներգործության ժամանակակից տեխնոլոգիաները դարձել են հիբրիդային պատերազմի կարևոր բաղադրիչ՝ համատեղելով տեղեկատվական

մանիպուլյացիան, սոցիալական ինժեներիան և տեխնոլոգիական առաջընթացը: Իրագործման հիմնական մեթոդներն ու դիտարկվող միտումներն են՝

1. Տեղեկատվական պատերազմ (Information Warfare):

Դեզինֆորմացիա–կեղծ տեղեկատվության համակարգված տարածում՝ հասարակության կարծիքը ձևավորելու և որոշումներ կայացնելը խեղաթյուրելու համար, օրինակ՝ Deepfake տեխնոլոգիաների միջոցով: Նարատիվների կառավարում՝ տեղեկատվական հոսքերի ֆիլտրում՝ մեդիայի, սոցցանցերի և ալգորիթմների միջոցով: [1]

2. Սոցիալական մեդիայի մանիպուլյացիա:

Բոտային ցանցեր և սինթետիկ մեդիա–ավտոմատացված հաշիվներ, որոնք տարածում են պրոպագանդիստական կոնտենտ, օրինակ՝ Twitter/X-ում կոորդինացված արշավներ՝ հաստատությունների վստահությունը քայքայելու համար, վիրուսային խաբեություն (Fake News) – Էմոցիոնալ կոնտենտի արագ տարածում՝ ալգորիթմների միջոցով (օգտագործելով զայրույթի կամ վախի ռեակցիաները) [2]:

3. Հոգեբանական օպերացիաներ (PsyOps):

Վախի և անորոշության սերմանում – Օրինակ՝ կեղծ սպառնալիքներ միջուկային սպառնալիքների կամ էպիդեմիաների մասին: Սոցիալական ինժեներիա – հասարակության խմբերի միջև հակամարտությունների ստեղծում (օրինակ՝ էթնիկական, կրոնական կամ աշխարհայացքային բաժանումներ) [3]:

4. Նեյրոտեխնոլոգիաներ և վարքագծային վերլուծություն:

Մեծ տվյալների (Big Data) օգտագործում – արհեստական բանականության միջոցով հիմնվելով սոցցանցերի ակտիվության վրա՝ անհատների վարքագիծը կանխատեսելու և ուղղորդելու նպատակով:

Տեղեկատվական ֆիլտրներ, ալգորիթմներ, որոնք սահմանափակում են տեղեկատվության տարածումը՝ ստեղծելով «փակ» տեղեկատվական միջավայր, օրինակ՝ Cambridge Analytica-ի սկանդալը՝ Facebook-ի տվյալների օգտագործմամբ ընտրություններին ազդելու համար [4]:

Նեյրոմարկետինգ – Տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են ենթագիտակցության վրա ազդեցության մեթոդներին (օրինակ՝ տեսողական կամ լսողական սուբլիմինալ ազդակներ) [4]:

5. Ալգորիթմական պատերազմ:

Ուղղորդված գովազդ (Microtargeting) – արհեստական բանականության միջոցով անհատականացված պրոպագանդա հասցնելը [5]:

6. Ֆիշինգ և սոցիալական ինժեներիա – Կիբերհարձակումներ՝ անձնական տվյալներ գողանալու կամ մարդկանց շահարկելու համար [6]:

Արդյունքների քննարկում: Ժամանակակից հիբրիդային պատերազմներում հոգեբանական ներգործության տեխնոլոգիաները դարձել են կարևոր գործիք՝ թույլ տալով ազդել հասարակության գիտակցության, ենթագիտակցության, արժեքների և վարքագծի վրա: Այս մեթոդները, ինչպիսիք են տեղեկատվական պատերազմը, սոցիալական մեդիայի մանիպուլյացիան, հոգեբանական օպերացիաները և նեյրոտեխնոլոգիաները, հնարավորություն են տալիս աննկատելիորեն փոխել հասարակական կարծիքը, քայքայել համակարգերը և ստեղծել ներքին բաժանումներ:

Օվերթոնի պատուհանի տեսությունը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է ժամանակի ընթացքում արմատական փոփոխություններ մտցնել հասարակության մեջ՝ դրանք դարձնելով նորմալ և ընդունելի:

Տեղեկատվական դարաշրջանում անհատների, համակարգերի և պետությունների խոցելիությունը մեծանում է, ինչը պահանջում է արդյունավետ պաշտպանական մեխանիզմների մշակում: Անհրաժեշտ է բարձրացնել հասարակության և համապատասխան ինստիտուտների տեղեկատվական գրագիտության մակարդակը, ուժեղացնել կիբերանվտանգությունը և ձևավորել հասարակություն, որը կարող է դիմակայել մանիպուլյացիաներին:

Եզրակացություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց՝ հիբրիդային պատերազմի մեթոդները դարձել են ավելի աննկատ և արդյունավետ, ինչը պահանջում է

համապարփակ միջոցառումների մշակում՝ ի պատասխան այդ մարտահրավերների, այդ թվում՝

1.Տեղեկատվական գրագիտության բարձրացում: Առաջարկվում է մշակել հատուկ կրթական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն տեղեկատվական պատերազմների մեթոդների բացահայտմանը: Հասարակության համեմատաբար լայն շրջանակներին պետք է հասկանալի լինեն ապատեղեկատվության, նեյրոմարկետինգի և սոցիալական ինժեներիայի գործիքները:

Քննադատական մտածողության զարգացում: Հնարավորինս շատ քաղաքացիներ պետք է սովորեն վերլուծել տեղեկատվության աղբյուրները, հայտնաբերել կեղծ տվյալները և դիմակայել մանիպուլյացիաներին:

Գործնական ուսուցում: Կազմակերպել վարժանքներ և սեմինարներ՝ կեղծ լուրերի և Deepfake տեխնոլոգիաների ճանաչման համար:

2. Կիբերանվտանգության ուժեղացում, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում: Առաջարկվում է զարգացնել արհեստական բանականության հիման վրա աշխատող համակարգեր, որոնք կկարողանան հայտնաբերել և չեզոքացնել վնասակար կոնտենտը սոցիալական ցանցերում:

Անվտանգության ստանդարտների մշակում: Առաջարկվում է պետական և մասնավոր հաստատություններում ներդնել տվյալների պաշտպանության նոր մեխանիզմներ, ինչպես նաև կանոնակարգել տեղեկատվության հոսքերի վերահսկումը: Կազմակերպել գործնական դասընթացներ՝ անձնական տվյալների պաշտպանության և կիբերահարձակումների կանխարգելման վերաբերյալ:

3. Հասարակական կայունության ապահովում, ազգային միասնության խթանում: Առաջարկվում է ակտիվ տարածել պատմական և մշակութային արժեքները՝ հիմնվելով հայրենասիրության և համերաշխության սկզբունքների վրա: Ստեղծել հարթակներ, որտեղ հասարակության տարբեր խմբերը կկարողանան քննարկել տարաձայնությունները՝ խուսափելով բևեռացումից: Մշակել ծրագրեր, որոնք կօգնեն անհատներին դիմակայել վախի և անորոշության սերմանման փորձերին:

4. Միջազգային համագործակցություն, մասնակցություն միջազգային նախաձեռնություններին: Առաջարկվում է ակտիվ միանալ տեղեկատվական անվտանգության ոլորտում գործող կազմակերպություններին և դաշինքներին: Զարգացնել գործընկերային հարաբերություններ այլ երկրների հետ՝ ռազմավարություններ և լավագույն պրակտիկաները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և համատեղելու նպատակով: Նախաձեռնել գիտական ծրագրեր, որոնք ուսումնասիրում են հիբրիդային սպառնալիքները և դրանց դեմ պայքարի ուղիները:

5. Գիտական հետազոտությունների խթանում, հոգեբանական ներգործության ուսումնասիրություն: Առաջարկվում է հնարավորինս աջակցել ակադեմիական և կիրառական հետազոտություններին, որոնք ուղղված են տեղեկատվական պատերազմի մեթոդների վերլուծությանը և դրանց դեմ միջոցառումների մշակմանը: Նորարարական տեխնոլոգիաների մշակում: Առաջարկվում է ներդրումներ կատարել արհեստական բանականության, մեծ տվյալների և նեյրոտեխնոլոգիաների ոլորտում՝ հակամանիպուլյացիոն գործիքներ ստեղծելու համար:

Հիբրիդային պատերազմի մարտահրավերները պահանջում են բազմակողմանի և հավասարակշռված մոտեցում: Սույն հոդվածում ներկայացված առաջարկությունները կենտրոնանում են չորս հիմնական ուղղությունների վրա՝ կրթություն, տեխնոլոգիական զարգացում, հասարակական համախմբվածություն և միջազգային գործընկերություն:

Այս միջոցառումների համատեղ կիրառումը կարող է նպաստել հասարակության կայունությանը, օգնել պահպանել ազգային անվտանգությունը և ինքնությունը՝ ժամանակակից բարդ սպառնալիքների պայմաններում:

СОВРЕМЕННЫЕ ТЕХНОЛОГИИ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВМЕШАТЕЛЬСТВА КАК КОМПОНЕНТ ГИБРИДНОЙ ВОЙНЫ

МАРТИРОСЯН ДАВИД
Ширакский государственный университет имени М. Налбандяна
КРОЯН САМВЕЛ
Армянский национальный университет архитектуры и строительства
кандидат агрономических наук, доцент

Война - это не просто процесс вооруженного конфликта. Это сложное многоуровневое противостояние, происходящее на современной стратегической платформе, где применение физической силы является лишь видимой частью более глубокого и систематического конфликта. Прежде всего, это когнитивное противостояние, полем битвы которого является человеческий разум. Его цель - сломать человека для дальнейшего преобразования, создания и использования в целях противника. В зависимости от нашего мировоззрения, образа мышления, традиций антагонист влияет на нашу психику, на убеждения и привычки, находя «ключ» к нашей когнитивной системе, чтобы управлять нашим поведением и влиять на наши решения и действия. [8]

Ни одна война никогда не начиналась и не велась без информационного воздействия на общество. Изменились только способы и технологии передачи информации, а цели всегда были одинаковыми: мотивировать и вдохновлять свои силы, деморализовать и дискредитировать противника.

Когнитивная и информационная составляющие войны сегодня приобрели большее значение, чем когда-либо. В условиях социальных сетей, цифровых платформ и глобализированного информационного поля противник может повлиять на сознание не только отдельных людей, но и широких слоев общества. Это создает новые вызовы для обеспечения национальной безопасности и безопасности.

Ключевые слова: информационно-психологическое воздействие, когнитивное противостояние, информационные технологии, разрушение систем.

MODERN TECHNOLOGIES OF PSYCHOLOGICAL INTERVENTION AS A COMPONENT OF HYBRID WAR

MARTIROSYAN DAVID
"M. Nalbandyan State University of Shirak" Foundation

KROYAN SAMVEL
Associate Professor, PhD in
National University of Architecture and Construction of Armenia

Abstract. War is not merely a process of armed confrontation. In the modern strategic landscape, it is a complex, multilayered confrontation in which the use of physical force represents only the visible fragment of a much deeper and systemic conflict. First and foremost, it is a cognitive confrontation, with the human mind as the main battlefield. Its objective is to break the individual for the purpose of transformation, reconstruction, and exploitation in line with the adversary's goals. The opponent influences our psyche by targeting our worldview, way of thinking, traditions, beliefs, and habits — essentially finding the "key" to our cognitive system in order to control our behavior and influence our decisions and actions [8].

No war has ever started or been waged without information influence on society. Only the methods and technologies of information transmission have changed, while the objectives have always remained the same: to inspire and motivate one's own forces, and to demoralize and discredit the enemy.

The cognitive and informational components of war have today acquired greater significance than ever before. In the context of social media, digital platforms, and a globalized information space, the adversary can influence not only individuals but also the consciousness of broad segments of society. This creates new challenges for the protection of national security and identity.

Key words: informational and psychological influence, cognitive confrontation, information technologies, systemic destruction.

Գրականություն

1. Benkler Y., Faris R., Roberts H., Network Propaganda: Manipulation, Disinformation, and Radicalization in American Politics. Oxford University Press, 2018, 41 p. https://academic.oup.com/book/26406 , (15.06.2025)
2. Marwick A., Lewis R., Media Manipulation and Disinformation Online, Data and Society Research Institute, 2017. https://datasociety.net/library/media-manipulation-and-disinfo-online/ (20.05.2025)
3. Zuboff S., The Age of Surveillance Capitalism. Disinformation as Political Communication. Harvard University Press, 2019. https://www.tandfonline.com/doi/full/10.1080/10584609.2020.1723755 (20.05.2025)
4. Paul C., Matthews M., The Russian "Firehose of Falsehood" Propaganda Model. RAND Corporation, 2016. https://www.rand.org/pubs/perspectives/PE198.html (19.05.2025)
5. Bennett W. L., Livingston S., The Disinformation Order: Disruptive Communication and the Decline of Democratic Institutions // European Journal of Communication, 2018, pp 2-8 https://journals.sagepub.com/doi/10.1177/0267323118760317 , (15.05.2025)
6. Matz S. C. et al., Psychological Targeting as an Effective Approach to Digital Mass Persuasion. PNAS, 2017. https://www.pnas.org/doi/full/10.1073/pnas.1710966114, (21.05.2025)
7. https://www.researchgate.net/publication/385385191_Shifting_Boundaries_of_Acceptability_Examining_the_Overton_Window_and_Its_Modern_Manipulators_in_US_Discourse (21.06.2025)
8. https://bspu.ru/unit/343/news/29554 (15.05.2025)
9. Սուն Ցզի, Պատերազմի արվեստը: Երևան, Լուսակն տպագրական: 2018: 171 էջ:

Ներկայացման ամսաթիվը՝ 04.03.2025
Ներկայացվել է տպագրության՝ 11.03.2026